

## ԿԱՐԾԻՔ

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱՆՈՍԻ

Ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի հայցորդ Սարգիս Գրիգորի Գաբայանի «Լեռնային գետերի վրա փոքր հիդրոհանգույցների կառուցման տեխնոլոգիական լուծումների առանձնահատկությունները» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ե.23.05. «Ջրատնտեսական համակարգեր և դրանց շահագործումը» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

#### **Աշխատանքի ընդհանուր բնութագրերը և թեմայի արդիականությունը**

Ս.Գ. Գաբայանի ատենախոսությունը նվիրված է լեռնային գետերի վրա տեղակայված փոքր հիդրոէլեկտրակայանների (ՓՀԷԿ) նախագծման և շահագործման ինժեներական լուծումների բարելավման արդիական և գործնականում նշանակալի խնդրին:

Հայաստանում, Վրաստանում և Կենտրոնական Ասիայի երկրներում փոքր հիդրոէլեկտրակայանները էներգետիկ անվտանգության և տարածաշրջանային զարգացման կարևորագույն բաղադրիչներից են: Սակայն լեռնային գետերի առանձնահատկությունները՝ բարձր թեքությունները, հոսքի խիստ փոփոխական ելքերը, բարձր պղտորությունը և սելավների վտանգը, զգալիորեն սահմանափակում են գործող նորմատիվ փաստաթղթերի կիրառելիությունը, որոնք հիմնականում վերաբերում են հարթավայրային գետերին և խոշոր հիդրոէլեկտրակայաններին:

Այս համատեքստում ընտրված ատենախոսության թեման, անկասկած, արդիական է և համապատասխանում է հիդրոտեխնիկայի ժամանակակից գիտական, տեխնիկական և գործնական մարտահրավերներին:

#### **Գիտական նորույթը**

Գիտական նշանակալի արդյունքներից կարելի է համարել լեռնային տարածքներում գտնվող ՓՀԷԿ-երի տեխնիկական և բնապահպանական խնդիրների առաջացման պատճառների բացահայտումը, ՓՀԷԿ-երի զարգացման փուլերի մոդելի մշակումը, հիդրավլիկ ավտոմատ ջրթափերի կիրառման հիմնավորումը, որոնք կարող են դառնալ բարձրալեռներում ջրհեղեղների դեմ պայքարի միջոց, լեռնային գետերի ջերմաստիճանային ռեժիմի մոդելի մշակումը, տղմազտարանների նախագծման օպտիմալացումը, ինչպես նաև «Crossflow» տուրբիններով համալրված ագրեգատների զուգահեռ աշխատանքի օպտիմալացումը:

#### **Գործնական նշանակությունը**

Աշխատանքի գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ ստացված արդյունքները անմիջապես կարելի է կիրառել լեռնային շրջաններում փոքր հիդրոէլեկտրակայանների նախագծման, վերակառուցման և շահագործման մեջ:

Հետազոտության արդյունքները կիրառվել են Ղրղզստանի Հանրապետությունում մի շարք փոքր հիդրոէլեկտրակայանների նախագծման և կառուցման ժամանակ, այդ թվում՝ Բոզուչուկի, Ջերգեզի, Ջերգալանի, Չոն-Ջարգիլչակի և այլ օբյեկտներում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, հղումների ընդարձակ ցանկից: Նյութը ներկայացված է գիտական ոճով, ճշգրիտ տերմինաբանությամբ: Կան պատկերային նյութեր, դիագրամներ և աղյուսակներ, որոնք լրացնում են տեքստը և հստակեցնում հետազոտությունների արդյունքները:

Ուսումնասիրության մեջ վերլուծության և ընդհանրացման են ենթարկվել գործող ՓՀԷԿ-երի շահագործման տվյալները, ինչպես նաև օգտագործվել են տեսական վերլուծության և ընդհանրացման, հիդրավլիկական և տեխնիկատնտեսական հաշվարկների, մաթեմատիկական մոդելավորման մեթոդներ:

Գիտական ամսագրերում հրատարակված հոդվածները, գիտաժողովներում ու սեմինարներում կատարված զեկուցումները հաստատում են ստացված արդյունքների հավաստիությունը:

Ատենախոսական աշխատանքում ստացված արդյունքներն ունեն ինչպես գիտական, այնպես էլ կիրառական արժեք, սակայն զերծ չեն որոշ թերություններից, որոնք չեն նվազեցնում ատենախոսության ընդհանուր գիտական արժեքը: Մասնավորապես.

1. տնտեսական մոդելները պահանջում են տարածաշրջանային ադապտացիա, իսկ ջերմաստիճանի մոդելը՝ հետագա չափաբերում՝ օգտագործելով դաշտային տվյալներ:
2. Ատենախոսությունը առաջարկում է մի շարք հաշվարկային և օպտիմալացման մոտեցումներ լեռնային գետերի վրա գտնվող ՓՀԷԿ-երի տարրերի համար: Սակայն, ուսումնասիրությունը հստակ չի սահմանում ստացված մոդելների կիրառելիության սահմանները ելքերի միջակայքերի, ջրանցքների թեքությունների և բարձրությունների նիշերի համար, ինչը բարդացնում է դրանց անմիջական օգտագործումը զգալիորեն տարբեր հիդրոլոգիական պայմաններում կառույցների նախագծման մեջ:
3. Ատենախոսությունը ուսումնասիրում է ՓՀԷԿ-երի բնապահպանական ասպեկտները՝ ներառյալ կառույցների փոխազդեցությունը իխտիոֆաունայի հետ, հիմնականում ինժեներական տեսանկյունից: Այնուամենայնիվ, ակնկալվում է, որ միջդիսցիպլինար տվյալների ավելի մանրամասն օգտագործումը կարող է ընդլայնել առաջարկվող լուծումների գործնական կիրառման շրջանակը:

Այս մեկնաբանությունները չեն նվազեցնում ատենախոսության ընդհանուր գիտական արժեքը, այլ խորհրդատվական բնույթի են և կարող են հաշվի առնվել հեղինակի կողմից ապագա հետազոտություններում: Սեղմագիրն ամբողջությամբ համապատասխանում է ատենախոսական աշխատանքի բովանդակությանը:

Տպագրված գիտական հոդվածները թվով ութն են, որոնցից վեցը առանց համահեղինակների և լիովին վերաբերում են ատենախոսության հաստատված թեմային:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերոնշյալի հիման վրա գտնում են, որ «Լեռնային գետերի վրա փոքր հիդրոհանգույցների կառուցման տեխնոլոգիական լուծումների առանձնահատկությունները» թեմայով ատենախոսությունն ամբողջովին համապատասխանում է ՀՀ կառավարության 08.08.1997թ. N327 որոշմամբ հաստատված, գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ նրա հեղինակ Սարգիս Գրիգորի Գաբայանը արժանի է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը Ե.23.05. «Ջրատնտեսական համակարգեր և դրանց շահագործումը» մասնագիտությամբ:

Ընդդիմախոս, տեխ. գիտ. թեկնածու

«Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի տնօրեն

12.02.2026թ.



Լևոն Վանոյի Ազիզյան